9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույց

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Ենթաառաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
1	Ընտրովի պատասխանով	20	20
2	Կարճ պատասխանով	16	16
3	Ընդարձակ պատասխանով	1	4
	Ընդամենը	37	40

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

1. Բառապաշար
2. Բառակազմություն
3. Ձևաբանություն
4. Շարահյուսություն
5. Թարգմանություն
6. Կապակցված խոսք գրելու հմտություն

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է լուծված առաջադրանքների միավորների գումարից (առավելագույնը 40 միավոր, դրական են համարվում 12 և ավելի միավորները), որը համապատասխանեցվում է գնահատման 10 միավորանոց համակարգին՝ համաձայն հետևյալ սանդղակի.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ՄԻԱՎՈՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
0-3	1
4-7	2
8-11	3
12-16	4
17-21	5
22-26	6
27-33	7
34-37	8
38-39	9
40	10

ՖՐԱՆՍԵՐԵՆ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը բաղկացած է 9 առաջադրանքից (37 ենթաառաջադրանք):

1-4-րդ առաջադրանքները (20 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանք՝ պատասխանի 4-ական տարբերակով, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 8 նախադասությունից, ամեն նախադասության համար տրված է քերականական տարբեր կարգեր արտահայտող 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել և տեղադրել ճիշտ տարբերակը:

Երրորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Տրված են հայերեն նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության համար տրված է թարգմանության 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել թարգմանության ճիշտ տարբերակը:

Չորրորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Տրված են նախադասությունների սկիզբը կամ վերջը: Պետք է տրված 4 տարբերակներից ընտրել նախադասության շարունակությունը կամ սկիզբը:

5-8-րդ առաջադրանքները (16 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Հինգերորդ առաջադրանքը կազմված է 5 նախադասությունից: Նախադասություններում բաց թողնված բայերը պետք է գրել նշված ժամանակաձևերով:

Վեցերորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Այն հնարավորություն է տալիս ստուգելու աշակերտների գիտելիքները քերականությունից: Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել ավելորդ բառը:

Յոթերորդ առաջադրանքը կազմված է 2 մասից և ընդգրկում է 4 նախադասություն: Առաջին երկու նախադասություններում ընդգծված բառը պետք է փոխարինել համապատասխան հականիշով, իսկ հաջորդ երկու նախադասություններում դրանք փոխարինել համապատասխան հոմանիշով:

Ութերորդ առաջադրանքում տրված են հարցերի պատասխանները և պահանջվում է կազմել ճիշտ հարց յուրաքանչյուր պատասխանի համար:

Իններորդ առաջադրանքը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է: Առաջադրանքի կատարման համար տրվում է առավելագույնը 4 միավոր: Առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ
(5-7 նախադասություն):

Այս առաջադրանքը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1. Բառապաշար. եթե բառիմաստները ճիշտ են արտահայտվել և կա բառիմաստի ոչ ավելի, քան 1-2 սխալ՝ տրվում է 1 միավոր: 3 և ավելի սխալի դեպքում միավոր չի տրվում:

2. Ձևաբանություն. եթե նախադասությունները ձևաբանորեն ճիշտ են, տրվում է 1 միավոր: Ձևաբանական 3 և ավելի սխալի դեպքում միավոր չի տրվում:

3. Շարահյուսություն. եթե նախադասությունների շարահյուսությունը ճիշտ է և կա շարահյուսական ոչ ավելի, քան 2 սխալ՝ տրվում է 1 միավոր: Շարահյուսական 3 և ավելի սխալի դեպքում միավոր չի տրվում:

4. Ուղղագրություն. ճիշտ ուղղագրության և մինչև 5 ուղղագրական սխալի դեպքում տրվում է 1 միավոր: 6 և ավելի տառասխալի դեպքում միավոր չի տրվում:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը: